

SINJAR YEZIDI
NATIONAL UNION
N.G.O



ՄԻՆՋԱՐ ԵԶԴԻՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՈՒՄ
հասարակական
կազմակերպություն

Հասցե: Արարատի մարզ, գյուղ Դիտակ, Ա. Խաչատրյան 18, հեռ. 098 487 637

Արմավիր մարզպետ
պարոն Ա. Ղահրամանյան

Հարգելի պարոն Ղահրամանյան

Համաձայն ՀՀ Սահմանադրության 27 եւ 27.1 հոդվածների եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում եմ ինձ տրամադրել տեղեկություններ այն մասին, թե Արմավիրի մարզի Արտաշար, Ֆերիկ, Նալբանդյան, Գետաշեն, Նոր Ամասիա, Չվաթնոց, Տանձուտ, Եղեգնուտ համայնքներում բնակվող քանի եզդի երեխա չի հաճախում դպրոց չնայած այն հանգամանքին, որ դպրոցահասակ են: Նրանցից քանիսն են արական և քանիսը իգական սեռի:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30-օրյա ժամկետ): Ուստի, խնդրում եմ տեղեկություն ստանալու հարցումիս պատասխանել օրենքով սահմանված կարգով եւ ժամկետներում:

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11) եւ հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող եմ ուղղել հարցումը:

(Պատրաստ եմ վճարել տեղեկատվության պատճենահանման ծախսերը):

Կանխավ շնորհակալ եմ՝

Նախագահ  Բորիս Մուրազի

25 /2017



22 ԱՐՄՎԻՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՈՒՄ
Առից թիվ 094/13038-17
27 09 2017